

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Մհեր Քումռնց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
vanik.virabyan@mail.ru

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ. ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ*

Հիմնաբառեր. ՀՀ, Լեռնային Ղարաբաղ, Թիֆլիս, Ադրբեջան, Ռուսաստան, Բրիտանիա, Բաքու:

Արցախի համար 1918–1920 թթ. ծավալված հակամարտությունը եղել է անզիջում և արյունոտ: Ադրբեջանն օգտվելով Անդրկովկասի եվրոպական ռազմաքաղաքական ներկայացուցչությունների աջակցությունից, հակահայկական ռազմավարություն որդեգրեց Ղարաբաղի նկատմամբ՝ վարելով էթնիկ զտման քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետության ղեկավար շրջանները անվերապահորեն հավատում էին, որ հարևան մահմեդական պետությունների հետ տարածքային վեճերում դաշնակիցները կպաշտպանեն Հայաստանին: Հայության ու նրան առաջնորդող ուժերի համար, որոնք խանդավառությամբ էին ընդունել բրիտանական զորքերի մուտքը Անդրկովկաս, դժվար էր կողմնորոշվել այդ երկդիմի քաղաքականությունում: Ռիչարդ Հովհաննիսյանը իրատեսորեն է գնահատում Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը. «1918 թ. վերջերին նրանք հավատում էին, որ Հայաստանին կհատկացվեն Օսմանյան արևելյան վիլայեթները: Հետևաբար, բնական էր թվում դիտել Ղարաբաղը և Զանգեզուրը, որպես փոխհատուցում Ադրբեջանին: Նավթային իմպերիալիզմն էր թելադրել բրիտանական քաղաքականությունը, թե ոչ, ամեն դեպքում տնտեսական գործոնները չէին կարող անտեսվել» (Հովհաննիսյան 2005, Հատոր I, 17–171):

ՀՀ թուլությունը ռազմական, էներգետիկ, պարենային և այլ խնդիրների առումով իր կնիքը թողեց ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերի վրա: Տարածքային սահմանազատումների առումով դժվարությունները կախվածության մեջ մնացին բրիտանական ռազմաքաղաքական առաքելությունից, որը որպես խորհրդա-

* Ստացվել է 12. 07. 2022 թ., ուղարկվել է գրախոսման 02. 09. 2022 թ., ընդունվել է տպագրության 18.11.2022 թ.: Հետազոտությունը տպագրվում է ՀՀ Գիտության Պետական Կոմիտեի Թեմատիկ Հայտի (21T-6A102. «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917-1920 թթ.)» շրջանակում:

տու բացասական դեր խաղաց ՀՀ արտաքին-քաղաքական հաշվարկների և ակնկալիքների ձևավորման հարցում՝ նպաստելով ՀՀ համար ոչ նպաստավոր վճիռներին: ՀՀ գլխավոր կովաններից մեկը դարձավ ոչ թե ճկուն և հեռահար գործունեությունը, այլ զինուժը, որը զինված էր ոչ բավարար քանակի և որակի, շատ դեպքերում խոտան զենքով, այդ թվում ոչ բավարար չափով պիտանի բրիտանական հրազենով: Այս հանգամանքը թույլ չտվեց հայկական ուժերին ամրանալ Կարսում, Նախիջևանում, Ղարաբաղում, որտեղ բրիտանացիները և մյուս դաշնակիցները շահագրգիռ մասնակցություն չցուցաբերեցին, ինչը թույլ չտվեց, որ ՀՀ կառավարությունը հակադրվեր բրիտանական ոչ հայամետ թելադրանքին, հաղթահարեր ստրկամիտ նվիրվածությունը Դաշնակիցներին, չկարողացավ զորավիգ լինել Ղարաբաղին և Զանգեզուրին՝ կուլ գնալով դաշնակիցների խաբուսիկ որոշումներին, ինչը կրկնվեց 2020 թ. Ադրբեջանի ու Թուրքիայի դեմ կապիտուլացիոն պատերազմի ժամանակ:

1918–1920 թթ. Մուսավաթական Ադրբեջանն անցնում է լայնածավալ գործողությունների, ոտնահարելով էթնիկական խմբերի ինքնորոշման անքակտելի իրավունքը, հավակնելով անգամ Սևանա լճի ավազանի արևելյան և հյուսիսարևելյան շրջաններին: Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական առաքելության պարտադրմամբ կասեցվում է Անդրանիկի զորաջոկատի առաջխաղացումը դեպի Շուշի, որով հայությունը զրկվում էր հեղինակավոր զորապետներից, իրագործելի դարձնելով Թոմսոն-Շատելվորտի ծրագիրը, այն է հպատակեցնել Ղարաբաղ-Զանգեզուրը և տիրել Արաքսի հովտին: Դրա մասին հստակ է արտահայտվել Ղարաբաղի Հայկական ազգային խորհրդի պատգամավոր Լևոն Զարաֆյանցը ՀՀ Նախարարների խորհուրդին ուղարկված 1919 թ. մարտի 17-ի գրությունում. «Հայկական ազգային խորհուրդը ամեն հնարավոր բան անում է, որպեսզի գործը չհասնի զինված բախմանը, որ պատերազմի դեպքում շատ հնարավոր է՝ մենք կջախջախվենք: Հայկական Ազգային խորհուրդը կարող է դուրս բերել 10–12 հազար զինվոր հրացանով, սակայն նա չունի ամուր ռազմական կազմակերպություն, չունի հեղինակավոր զինվորական ղեկավար, փող չունի, իսկ ամենագլխավորը՝ ունի շատ քիչ ռազմամթերք, և այդ ամենը այն պահին, երբ հայկական Ղարաբաղի գլխավոր ռազմավարական կետերը արդեն գրավված են ադրբեջանական կանոնավոր զորքերի կողմից» (Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 53):

1919 թ. ապրիլի 3-ին Դիգբի Շատելվորտը հայտարարում է, որ մինչև Ղարաբաղի հարցով վերջնական որոշման կայացումը Փարիզի վեհաժողովի կողմից, այդ շրջանը պետք է մնա Ադրբեջանի կազմում (կՌսՌտփցՍ 2021, 132, 136): Ալեքսանդր Խատիսյանի գնահատմամբ. «Անգլիական գործօն քաղաքականութեան առաջին քայլերը Կովկասի մէջ եղան, ամէն տեսակ ջանքեր Ատրբէջանի սահմաններու մէջ մտցնելու Ղարաբաղի և Զանգեզուրի հայկական շրջանները» (Խատիսեան 1968, 179):

Արցախի հարցում դատավճռային շրջադարձի սկիզբը դրվեց դեռ 1919 թ. օգոստոսի 12-ի Ղարաբաղի 7-րդ համագումարով, որը քննելով ստեղծված դրությունը և համոզվելով, որ անգլիացիներն ըստ էության պաշտպանում են ադրբե-

ջանցիներին, իսկ ՀՀ կառավարությունն էլ ի վիճակի չէ որևիցե լուրջ ռազմաքաղաքական աջակցություն հասցնելու, որոշեց օգոստոսի 15-ին ընդունել Բաքվի հետ համաձայնությունը: Արդյունքում Ադրբեջանին հաջողվում է Արցախին պարտադրել 1919 թ. օգոստոսի 22-ի իրավակարգը, որի համաձայն Արցախը պարտավորվում էր ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին՝ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը: Դա, ըստ էության, ռազմաքաղաքական պարտություն էր Ադրբեջանի հետ հակամարտությունում, որի կապակցությամբ Ռ. Հովհաննիսյանը նկատում է. «1919 թ. օգոստոսի 22-ի կարգավորումը անձնական հաղթանակ էր Խոսրով-բեկ Սուլթանովի և ազգային հաղթանակ Ադրբեջանի համար: Ղարաբաղը, ի վերջո ենթարկվեց Ադրբեջանի ժամանակավոր կառավարմանը: Ժամանակավոր կառավարումը մի ազդու և խոշոր քայլ էր դեպի մշտական տիրապետություն: Ինչ մարտավարություն էլ ընդուներ ապագայում Հայաստանի Հանրապետությունը, նրան այլևս չէր հաջողվելու ստիպել Ադրբեջանին հեռանալու այդ հայաբնակ լեռնաշխարհից: Ադրբեջանը օգտվեց բրիտանական հրամանատարների հովանավորությունից, Փարիզի Հաշտության վեհաժողովի հապաղումներից՝ վիճելի տարածքի նկատմամբ գործնական միջոցներ ձեռք առնելու հարցում և հայկական կառավարության ընդհանուր անկարողությունից: Այն ամենը, ինչ մնաց հայերին, լոկ Ղարաբաղի ինքնավարության խոստումն էր և գոհունակությունը, որ Զանգեզուրը, այնուամենայնիվ, չմտցվեց ընդհանուր հանրապետության մեջ» (Հովհաննիսյան 2005, Հատոր I, 205):

Այսպիսով, Խոսրով-բեկ Սուլթանովի[1] մուսավաթական վարչակազմը կարողանում է 1919 թ. օգոստոսի 22-ի պայմանագրով Ղարաբաղի հայ բնակչությանը պարտադրել ժամանակավորապես ընդունել Ադրբեջանի գերակայությունը՝ մինչև հարցի վերջնալուծումը Փարիզի վեհաժողովի «բարեկամ երկրների»՝ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կողմից (Векилов 1998, 29), և դրանով իսկ արմատապես խարխլում ՀՀ անվտանգային շահերը, որն էլ արտացոլվեց ավելի ուշ 1920 թ. ապրիլյան Անդրկովկասյան վեհաժողովի արդյունքներում (Վիրաբյան 2004, 5–40):

ՀՀ-ն ամրապնդվելով Զանգեզուրում, չկարողացավ, սակայն, հաստատվել Ղարաբաղում, որտեղից խաբեությամբ հեռացվեցին Անդրանիկը և Դրոն, Արսեն Շահմազյանը[2] (Հովհաննիսյան 2005, 169–215), որին ՀՀ կառավարությունը 1919 թ. հունվարի 21-ին նշանակել էր Արցախ-Զանգեզուրի գեներալ-կոմիսար (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 4): Եվ դա այն պարագայում, երբ հայ քաղաքական էլիտան դաշնակիցների Կովկաս ժամանելու պահին կարծում էր, որ հայկական շահերը կգերակայեն: Գեներալ Հովհաննես Հախվերդյանը հիասթափված հիշում է, որ «Թոմսոնը չէր շտապում ժամանել Երևան, մինչդեռ ՀՀ կառավարությունը սպասում էր, ենթադրելով, որ հայ ժողովուրդը որպես թշնամու դեմ մինչև վերջ պայքարած և դաշնակիցներին հավատարիմ մնացած, ամենից շատ իրավունք ուներ դաշնակիցների կողմից հատուկ վերաբերմունքի: Գեներալ Ուիլյամ Թոմսոնի

1 Սուլթանով Խոսրով բեկ Փաշա-բեկ օղլի (1879–1943): 1919 թ. փետրվարի 12-ից հանդիսացել է Ղարաբաղի գեներալ-նահանգապետը:

2 Արսեն Շահմազյան (1883–1937): ՀՀ զինվորական հայտնի գործիչ:

հետ առաջին իսկ հանդիպմանը Քաջազնունին արտահայտեց դա: Ու. Թոմսոնը բավականին կտրուկ առարկեց, թե իրենք ավելի կարևոր գործեր ունեն, քան ուղղակի համակրանք արտահայտելն է» (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 3–4):

Բրիտանական ռազմական ներկայացուցչության դիրքորոշումը ի դեմս գեներալներ Ու. Թոմսոնի և Դ. Շատելվորտի հատկապես վրդովեցուցիչ էր արհեստականորեն վիճելի հռչակված Լեռնային Ղարաբաղի, Սյունիք-Զանգեզուրի և Նախիջևանի հարցում, ինչը շփոթեցրեց անգամ մյուս դաշնակիցներին, որի մասին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ, իր լրտեսական գործունեությամբ հայտնի Խան Թեքինսկին (Virabyan 2021, 51–81) 1919 թ. մայիսի 20-ի իր զեկույցում նկատել է. «Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչն իր դժգոհությունն արտահայտեց անգլիացիների քաղաքականությունից, որն ուղղված էր բացառապես հօգուտ Ադրբեջանի, և գլխավորապես Ու. Թոմսոնի քաղաքականությունից, որը հասավ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելուն, ինչը ֆրանսիացիների կարծիքով անարդարություն է: Այնուհետև ասաց, որ մյուս դաշնակիցների գալով քաղաքականությունը պետք է փոխվի» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 25):

Ինչ վերաբերում է Իտալիայի և ավելի փոքրակշիռ երկրների ներկայացուցիչների համակրանքին, ապա դա դեկլարատիվ համակրանքի և էմոցիայի տպավորիչ պոռթկումներից այն կողմ չգնաց: Գերազանցապես բրիտանական ջանքերով ՀՀ տարածքային ամբողջությունից դուրս մնացին Ախալքալաք–Ջավախքը, «Լոռու չեզոք գոտին», Լեռնային Ղարաբաղը և Շարուր-Նախիջևանը: Մեծ Բրիտանիան և մյուս դաշնակիցները ավելի շատ հոգացին մեծ և հզոր Ադրբեջան ստեղծելու հարցում, և բոլորովին շահագրգիռ չեղան ուժեղ Հայաստանի ստեղծման հարցում, ավելին ՀՀ-ին-ին մինչև վերջ տրամադրեցին ընդդեմ հյուսիսից եկող բոլշևիկյան վտանգի, սակայն վերջին պահին լքեցին և նրա շահերը ստորադասեցին Մուստաֆա Քեմալի խորհրդով բոլշևիկացած Ադրբեջանին՝ խրախուսելով նաև Հայաստանում մահմեդական խռովարար շրջանների անջատողական տրամադրությունները: Այդ մասին փաստում է 1920 թ. ապրիլի 20-ի զեկույցում ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Տիգրան Դեվոյանցը. «Բոլոր մուսուլմանական կանոնավոր զորքերի թվաքանակը Զանգեզուրի գավառում հասավ մինչև 6000 հետևակի, 300 սուր, 400 քուրդ, 8 թեթև և 4 հաուբիցային թնդանոթ: Պարտիզանների հետ միասին նրանց թվաքանակը հասավ 20.000 մարդու: Նոյեմբերի սկզբներին Ադրբեջանը կենտրոնացրեց ողջ այդ զորաջոկատը 1-ին դիվիզիայի պետ գեներալ Շիխլինսկու հրամանատարությամբ երեք կետերում, հարձակում ձեռնարկելով անհնազանդ հայերով բնակեցված Զանգեզուրի վրա: Զանգեզուրում պարտությունից հետո (վերցվեց 13 գնդացիր, ավելի քան 150 գերի, և շատ վիրավորներ), Խան Թեքինսկին հրահանգում է անսկատ Զանգեզուրի շրջան ուղարկելու թուրքական սպաների, որոնք այնտեղ պետք է կազմակերպեին տեղական թաթարական բնակչությանը, որպեսզի ադրբեջանական կանոնավոր զորքերի հարձակման ժամանակ թիկունքից հարվածեն Զանգեզուրին: Ընդ որում Ադրբեջանը կրկին նպատակ է դնում ինչ գնով ուզում է լինի մաքրել Ելիզավետպոլի նահանգի ողջ լեռնային գոտին (Ջիվանշիր) հայերից, և զինաթափել Ղարաբաղը, իսկ այնուհետև իր իշխանությանը ենթարկել և Զանգե-

զուրը: Մարտի 12-ին բոլոր տեսակի զորատեսակները ուղարկվել են ոչ միայն Ղարաբաղի և Տերտերի կողմերը, այլև Ղազախի կողմը, ընդ որում այդ օրերին Բաքվում Պաշտպանության կոմիտեն քննարկել է թուրքերի հետ համատեղ Հայաստանի վրա հարձակվելու հարցը: Մարտի կեսերին Ադրբեջանը համաձայն վերջնագրի, ձեռնամուխ է եղել Ղարաբաղի զինաթափմանը, և կենտրոնացնելով իր ուժերը, ընդհանուր հարձակում է ձեռնարկել Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 180–181):

1920 թ. փետրվարին ադրբեջանական բանակի զգալի մասը՝ մոտ 10000 հոգի, հավաքվեց Ղարաբաղի ճակատում (Վրացյան 1993, 394–395): Փետրվարի 19-ին Սուլթանովը պահանջեց՝ Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս: Ղարաբաղը մերժեց այդ անօրինական պահանջը: Հետևանքները, ինչպես նշում է Ս. Վրացյանը, կարող էին լինել շատ ավելի աղետավոր, եթե ապրիլի 13-ին Ղարաբաղ չհասներ Դրոյի էքսպեդիցիոն զորամասը, որը ապրիլի 15-ին զորահավաք հայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր մնաց Ղարաբաղում: Ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի 9-րդ համագումարը, որը 44 ձայնով մեկի դեմ մի անգամ ևս որոշեց մերժել Ադրբեջանի իշխանությունը և Արցախ-Ղարաբաղը համարել Հայաստանի մաս (Վրացյան 1993, 396):

1920 թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրվեց Անդրկովկասի հանրապետությունների վեհաժողով, որի դրդապատճառը Ղարաբաղի, մասնավորապես Շուշիի հայության մարտյան սպանդն էր: Դաշնակիցները պահանջեցին վերջ տալ արյունահեղությանը, որի պահանջով հանդես եկավ նաև Եվգենի Գեգեչկորին՝ զգուշանալով Վրաստանի քաոսի մեջ ներքաշվելու վտանգներից: Մարտի 27-ին Նոյ Ժորդանիան դիմեց դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով միջնորդել՝ մարելու Ղարաբաղի հրդեհը և հանդարտեցնելու տարածաշրջանը: Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներ Օ. Ուորդրոպը, կոմս դը Մարտելը և գնդապետ Մ. Գաբբան, ապրիլի 1-ին հեռագրով դիմեցին Բաքու և Երևան՝ «եռանդագին հրավիրելով» խաղաղ միջոցներով և անհապաղ լուծել Ղարաբաղի և ուրիշ գավառների հարցերը, ուր «խաղաղությունը վտանգված է: Հաշտության այս հանդիսավոր կոչը, եթե չլսվի այն ժամին, երբ թերևս, ամբողջ Անդրկովկասի բախտը վճռվելու վրա է, կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ ձեր կառավարությունների համար» (Հովհաննիսյան 2015, Հատոր III, 200):

Ե. Գեգեչկորին դեռ մարտի 1-ին Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներին հղված ուղերձում հիշեցրել էր, որ հունվարի 19-ին իրենք համաձայնության են եկել ընդհանուր խնդիրները լուծելու համար պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել, որին Ալ. Խատիսյանն արագ՝ մարտի 3-ին համաձայնություն տվեց, իսկ Ֆաթալի Խան-Խոյսկին մարտի 5-ին առաջարկեց, որ խորհրդաժողովի անցկացման վայրը Թիֆլիսից տեղափոխվի Բաքու և օրակարգ մտցվեն համադաշնության հարցերը, և կապվելով Երևանի հետ՝ ցանկություն հայտնեց, որ հայկական պատվիրակությունը օժտվի որոշում կայացնելու լիազորություններով: Ալ. Խատիսյանը արձագանքելով Ֆ. Խան-Խոյսկուն, պատասխանում է, որ նախքան համադաշնությանը դրականորեն պատասխանելը, պետք է վերականգ-

նել ստատուս-քվոն («status qvo») Ղարաբաղում՝ խստորեն պահպանելով 1919թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնության պայմանները, ընդունել առկա վիճակը Զանգեզուրում, բացել Երևան-Ջուլֆա երկաթուղագիծը և ճանաչել Շարուր-Նախիջևանը որպես Հայաստանի անքակտելի մաս (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.475, թ.128, «Յառաջ» 1920, 7 մարտի, 11 մարտի: «Азербайджан» 1920, 7 марта):

ՀՀ կառավարությունը ապրիլի 2-ին հայտարարեց, թե ինքը լիովին համամիտ է դաշնակիցների առաջարկին, և իր պատգամավորները ապրիլի 5-ին կլինեն Թիֆլիսում՝ մասնակցելու խորհրդաժողովին: Ապրիլի 4-ին ՀՀ խորհրդարանն էլ զբաղվեց Ղարաբաղի դեպքերով և հավանություն տվեց կառավարության քաղաքականությանը (ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.321, թ.397): Նույն օրը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը Արտգործնախարարություն ուղարկված հեռագրում հայտնում էր, որ Մ.Գաբբայի հետ ապրիլի 2-ին տեղի է ունեցել հանդիպում, որի ժամանակ Իտալիայի հանձնակատարը ափսոսանք է հայտնել, որ հայերն ապստամբել են Ղարաբաղում մի այնպիսի ժամանակ, երբ գծվում են Հայաստանի սահմանները, և որ նման քայլն իմաստ չուներ, ինչպես և չուներ Ադրբեջանի կողմից իրավիճակին միջամտելը Կարսի մարզում: Տ.Բեկզադյանը տեղեկացնում էր, որ ինքը փորձել է համոզել գնդապետ Մ.Գաբբային և Դաշնակիցների մյուս ներկայացուցիչներին, որ ապստամբության պատճառը չի եղել ՀՀ միջամտությունը, այլ Ադրբեջանի կողմից 1919թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագրի խախտումը և Ղարաբաղի հայությանը զինաթափելը (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.62):

Համաժողովն սկսվեց 1920թ. ապրիլի 9-ին, որին մասնակցում էին Ադրբեջանից՝ Հասան-բեկ Աղաևը, Օլգերդ-բեյ Կրիչինսկին, Ֆարիս-բեկ Վեքիլովը: Համո Օհանջանյանը Ալ.Խատիսյանին ուղղված 1920թ. ապրիլի 8-ի նամակում ոչ ճիշտ գտնում էր, որ Ադրբեջանն, ունենալով այդ ներկայացուցիչները («Բանբեր Հայաստանի արխիվների» 1996, 1, 74), լուրջ նշանակություն չէր տալիս կոնֆերանսին[3], ինչն այդպես չէր: Վրաստանից ներկա էին Ե.Գեգեչկորին, Գ.Լորդկիպանիձեն, ՀՀ-ից՝ Հ.Օհանջանյանը, Տ.Բեկզադյանը, Ս.Խաչատրյանը և ուրիշներ: Վրացական պատվիրակությունը քողածածկված եզրեր ուներ ադրբեջանցիների հետ, որոնց հետ դեռ 1919թ. հունիսին կնքել էին պաշտպանական ռազմաքաղաքական դաշինք: Դա բացահայտվեց ռազմական գործողությունների դադարեցման հարցի քննարկմամբ, որը հետաձգվեց անորոշ ժամանակով՝ մինչև Ադրբեջանի կառավարությունից պատասխանի ստացումը: Հ.Օհանջանյանը և Ե.Գեգեչկորին առարկեցին դրան, պնդելով, որ այլ լուրջ հարցեր չի կարելի քննարկել, քանի դեռ կոիվը չի դադարեցվել («Յառաջ» 1920, 23 ապրիլի: Վրացեան 1928, 344, «Борьба» 1920, 20 апреля):

Ապրիլի 10-ի նիստում ելույթ է ունենում Ստ.Մամիկոնյանը և կարևորում առաջին հերթին բախումների դադարեցման հարցը, սակայն Ե.Գեգեչկորու

3 Ֆաթալի Խան-Խոյսկին ևս սպասվում էր Թիֆլիսում, սակայն չժամանեց, իսկ ադրբեջանական պատվիրակները չհամաձայնվեցին նրա բացակայությամբ քննարկել ռազմական գործողությունների դադարեցման հարցը:

պնդմամբ նիստը դադարեցվում է, քանի որ Ադրբեջանի պատվիրակությունը դեռևս իր կառավարությունից պաշտոնական դիրքորոշման հստակ ցուցումներ չէր ստացել (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 158–160, գ. 441, թ. 60–61: «Յառաջ» 1920, 23, 27 ապրիլի: Վրացեան Ս. 1928, 344): Արտգործնախարար Օհանջանյանը Խատիսյանին տեղեկացնում է, որ Ադրբեջանի ռազմավարությունը հասկանալի է, Ադրբեջանը ձգտում է Ղարաբաղի խնդիրը լուծել մինչև ռազմական բախումների մասին կետը օրակարգ մտցնելը, որ Դաշնակիցներից օգուտ չկա, որ գնդապետ Ուիլյամ Հասկելը ձեռքերը լվացել է կովկասյան հարցերում և սրտնեղած է Հայաստանի կառավարությունից, Օ. Ուորդրոպը հիվանդ է, իսկ կոմս դե Մարտելը և մյուսները բացի համակրական խոսքերից ոչինչ չեն անում, իսկ Ե. Գեգեչկորին և Գ. Լորդկիպանիձեն շոայլ արտահայտություններ են հնչեցնում բարեկամության մասին, սակայն նաև խոստովանում, որ Վրաստանն իրեն դավաճանված է զգում Բաթումիի հարցում Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի քայլերից (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 106–107):

Ի վերջո Հասան-բեկ Աղաևը հայտարարում է իր կառավարության համաձայնության մասին ողջ Անդրկովկասի տարածքում ռազմական գործողությունների դադարեցման մասին: Ըստ այդմ էլ Ե. Գեգեչկորին առաջարկում է հետևել ա) արյունալի ընդհարումների դադարեցման ուղղությամբ վեհաժողովի կողմից ձեռնարկվելիք միջոցառումներին, բ) անդրկովկասյան հանրապետությունների տարածքային վեճերի մասին առաջարկվող լուծումներին, գ) արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ գործողությունների կոորդինացիայի անհրաժեշտության մասին, դ) կոնֆեդերացիայի ստեղծման ուղղությամբ դիրքորոշումների համաձայնեցման հարցին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 164):

Տ. Բեկզադյանը հայտարարում է, որ եթե վեհաժողովը համաձայնության չգա ռազմական գործողությունների դադարեցման հարցում, ապա հայկական պատվիրակությունը չի կարող մասնակցել որևիցե միության ստեղծմանը: Հ. Աղաևն ու Օ. Կրիչինսկին պնդում են, որ համադաշնության մասին փոխհամաձայնությունը կնպաստի այլ հարցերի լուծմանը, սակայն հայկական կողմը բացահայտորեն խուսափում է համադաշնության հարցի քննարկումից՝ պատճառաբանելով, որ այդպիսի միության համար անհրաժեշտ են որոշակի և փոխադարձաբար ճանաչելի սահմաններ, առավել ևս, որ արյունահեղությունը չի դադարեցվել:

Ե. Գեգեչկորին կարծես թե հակված էր համաձայնելու հայերի հետ, սակայն ընդհանուր անդրկովկասյան խնդիրները լուծելու համար կարևորեց երեք հանրապետությունների միասնական մարմին ստեղծելը: Գ. Ս. Լորդկիպանիձեն առաջարկ է ներկայացնում. «Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովը, քննարկելով Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների միջև ռազմական գործողությունների դադարեցման մասին» հարցը, որոշում է. ա) հայտարարել բոլոր ռազմական բախումների դադարեցման մասին իր կտրուկ որոշումը, բ) վեհաժողովի որոշման մասին իրազեկել կառավարություններին, գ) ընտրել հանձնաժողով՝ տեղ գտած իրադարձությունների հետաքննման համար («Յառաջ» 1920, 27 ապրիլի, «Борьба» 1920, 22 апреля):

Համերաշխվելով Գ.Լորդկիպանիձեի հետ՝ Հ.Աղաևը անհրաժեշտ գտավ նշել բանաձևում, որ պատերազմը մղվում է ոչ միայն Ադրբեջանում, այլև նրա սահմաններից դուրս, ընթացող բախումներում տեսնելով պատերազմ միայն հայտնի «ազգերի՝ մուսուլմանների և հայերի միջև: Այդ իսկ պատճառով էլ նա պնդեց «ռազմական գործողությունները դադարեցնել այնտեղ, որտեղ դրանք տեղի էին ունենում»: ՀՀ պատվիրակությունը, ըմբռնելով ադրբեջանական տեսակետի կողմնակալ ուղղվածությունը, առաջարկում է «մուսուլմաններ» բառը փոխարինել «ադրբեջանցիներ» բառով, որին ադրբեջանական պատվիրակությունը հակադարձում է, պնդելով, որ անպայման նշվի, որ հայերի և ադրբեջանցիների միջև ռազմական գործողությունները ընթանում են ինչպես հանրապետությունների սահմաններին, այնպես էլ Ադրբեջանի սահմաններից դուրս, օրինակ, հենց Հայաստանում: Վերջին պնդումը պատճառ է դառնում, որ հարցի քննարկումը փակուղի մտնի (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.548, թ.166):

Ֆ.Վեքիլովի կարծիքով, համընդհանուր բախումների պայմաններում երաշխիքներ չկան, որ, բախումների շրջանները փոքրանալու են, հետևաբար անհրաժեշտ է որոշակիորեն ցույց տալ, որ խոսքը գնում է Ադրբեջանում բնիկ հայ և մուսուլմանական բնակչության մասին՝ Հայաստանում: Հայկական պատվիրակությունն առաջարկում է բախումների տեղերի մասին ընդգծել՝ «Դադարեցնել բախումները Ղարաբաղում, Նուխիում, Նախիջևանում, Օրդուբադում և այլ վայրերում, որտեղ դրանք տեղի են ունենում, հայերի և ադրբեջանցիների միջև՝ Անդրկովկասի սահմաններում»: Հայկական պատվիրակությունն ընդգծում է, որ Հայաստանում մուսուլմանների վիճակի կապակցությամբ, ինչպես և Ադրբեջանում՝ հայերի, վեհաժողովը կարող է հայտարարել ընդհանուր կարծիք, որ այս հանրապետությունների սահմաններում չթույլատրվի որևիցե հալածանք և բռնություն ազգային հողի վրա: Բանավեճի և Գ.Լորդկիպանիձեի առաջարկությունների արդյունքում բանաձևն ընդունվում է. ա) Անմիջապես դադարեցնել բոլոր արյունալի բախումները, որ այժմ տեղի են ունենում Նուխիում, Նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբաղում, բ) վեհաժողովը պնդում է, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններն անմիջապես ամենավճռական միջոցներ ձեռք առնեն, որպեսզի իսպառ բացառվի ամեն կարգի բախումների հնարավորությունները հայ և մուսուլման բնակչությունների միջև հանրապետությունների սահմաններում, գ) որոշման մասին անհապաղ տեղեկացնել Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.548, թ.167–170): Սակայն անտեսելով կոնֆերանսի ընդունած բանաձևը, Ադրբեջանը շարունակում էր Ղարաբաղի և Ադրբեջանի հայաբնակ վայրերի հայ բնակչության զինաթափումը և սպանդը:

Ապրիլի 12-ին քննարկվում է Գ.Լորդկիպանիձեի բանաձևը՝ մինչև ռազմական բախումները եղած իրավական ստատուսը վերականգնելու մասին: Սակայն Ադրբեջանի ներկայացուցիչ Օ.Կրիչինսկին գտնում է, որ խոսք անգամ չի կարող լինել օգոստոսի 22-ի համաձայնության լիակատար վերականգնման և նախկին կարգավիճակի մասին, այլ ընդամենը այն փաստական վիճակի, որը եղել է 1919 թ. նոյեմբերի 23-ի համաձայնությամբ: Տ.Բեկզադյանը հակադրվեց դրան, ասելով,

թե «նոյեմբերի 23-ի համաձայնությունը ոչինչ չի ասում որևիցե իրավական նորմի և կարգավիճակի մասին, այլ միայն ընդունում է զենքի չօգտագործման և տարաձայնությունների դեպքում հարցերը միջնորդական արբիտրաժ հանձնելու մասին: Այս համաձայնությունը, ըստ վերջինիս, կարծես թե իր մեջ ներառում է նախորդ՝ օգոստոսի 22-ի համաձայնությունը Ղարաբաղի Հայոց Ազգային Ժողովի և Ադրբեջանի կառավարության միջև, որ Ղարաբաղի հարցում ստատուս-քվոն պետք է հիմնված լինի 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագրի 26 կետից բաղկացած պայմանավորվածության վրա, որ նախորդ բոլոր պայմանավորվածությունները ամփոփվել են Նասիբ բեկ Ռուսուբբեկովի և Ալ. Խատիսյանի միջև 1919 թ. նոյեմբերին ձեռքբերված համաձայնության մեջ, որը երկու կողմերին պարտավորեցնում էր գտնել վեճերի լուծման կամ իրավարարության խաղաղ տարբերակներ:

Օ. Կրիչինսկին ռեպլիկ է բաց թողնում, ասելով, որ նոյեմբերի 23-ի ակտն արդեն իսկ կլանվում է ներկա վեհաժողովի կողմից. «Այնտեղ ընդունվել են նույն դրույթները, ինչ որ մենք մտցրել ենք մեր որոշման մեջ», — պնդում է Օ. Կրիչինսկին: Հակադարձելով ադրբեջանական պատվիրակությանը, Հ. Օհանջանյանը նշում է, որ Ադրբեջանը արբիտրաժի փոխարեն դիմել է զենքի, որից երկու ելք պետք է տեսնել՝ վերադարձ ստատուս-քվո վիճակին ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում, կամ վստահեցում բախումների դադարեցման հարցում և դրանց կասեցում այնտեղ, ուր այն շարունակվում է (նույն տեղում): Ի վերջո, ապրիլի 12-ի նիստում որոշվում է. «Անհապաղ լիովին վերականգնել այն իրավական կարգավիճակը, որը գոյություն է ունեցել մինչև բախումները՝ հենվելով Հայաստան-Ադրբեջանի և Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովի կողմից ձեռք բերված համաձայնություններին, հավասարապես համապատասխան կառավարությունների հետ Ազգային Խորհուրդների պայմանագրերին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167–168):

Լեհ-թաթարական ծագում ունեցող Օ. Կրիչինսկի-Նայմանը, ով փորձառու դիվանագետ էր, հակառակվում է դրան, պնդելով, որ օգոստոսի 22-ի համաձայնությունը շատ կետերում խախտվել է, և կարող է խոսք գնալ միայն այն սահմաններին վերադառնալու մասին, որոնք եղել են նոյեմբերի 23-ին՝ հաստատելով փաստական իրավիճակը սահմանների առումով (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167-169, Туманян 2012, 418, 449): Հակադրվելով՝ Տ. Բեկզադյանը պնդում է, որ տեղի է ունեցել հասկացությունների խառնաշփոթ՝ չժխտելով, որ Ադրբեջանը տիրել է Ղարաբաղին՝ թեկուզ և ժամանակավորապես, խաբելով հայերին, ուրեմն խոսք անգամ չի կարող լինել բնակչության հետ համաձայնության մասին, որ եթե այդ համաձայնությունը խախտվել է, ապա պետք է վերականգնել բախումներից առաջ եղած status qvo ante-ն (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ. 548, թ. 167–170):

Օ. Կրիչինսկին, հանդես գալով Տ. Բեկզադյանից անմիջապես հետո, պնդեց, որ Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ օգոստոսի 22-ի համաձայնությունը չպետք է ընդունել որպես միջազգային բնույթի ակտ, այլ որպես հրահանգչային բնույթի ներքին կառավարման ակտ (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 168–170): Այո՛, սա դիվանագիտական մանևրումի փայլուն նմուշ է: Տ. Բեկզադյանը հակառակվում է, և

ավելի հզոր կովան չգտնելով, պնդում, որ այդ ակտը չհրատարակելով ակնհայտ կդառնա, որ այն ոչ թե ներքին կառավարման հրահանգ է եղել, այլ հենց միջազգային բնույթի համաձայնություն, ընդ որում Ադրբեջանի կառավարության կողմից հորինված (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 169–170)։ Օ. Կրիչինսկին ոչ առանց հիմքերի նկատում է, որ ղարաբաղցիները, թեկուզև ժամանակավորապես, սակայն համաձայնվել են Ադրբեջանի իշխանությանը, որ այն բանից հետո, երբ Ղարաբաղն օգոստոսի 22-ին ընդունել է Ադրբեջանի իշխանությունը, ղարաբաղյան հարցը դարձել է ներքին հարց, որ պետություն պետության մեջ բացառվում է (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 170–171)։ Ադրբեջանի պատվիրակները հմտորեն շահարկում էին «ժամանակավորապեսի» հանգամանքը, իսկ հայկական կողմը փորձում էր փակուղային վիճակից ելք գտնել։

Ե. Գեգեչկորին անհրաժեշտ համարեց վերականգնել մինչև բախումները եղած իրավիճակը, որի վրա էր հիմնված և 1919 թվականի նոյեմբերի 23-ի համաձայնությունը, շեշտելով, որ այդ համաձայնությունն իր մեջ ներառում է օգոստոսի 22-ինը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 171)։ Հ. Օհանջանյանը հակադրվելով, ընդամենը պնդում է, որ համաձայնության մեջ ներառեն նաև օգոստոսի 22-ի իրավական ակտը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 171)։ Վերջապես ընդունվում է մի բանաձև, որին երկու կողմերն էլ համաձայնում են. «Անհապաղ լիովին վերականգնել այն իրավական ստատուսը, որը գոյություն է ունեցել մինչև բախումները, և հենվել այն համաձայնության հիմքի վրա, որ ձեռք է բերել հայ-ադրբեջանական և Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովներում, հավասարապես Ազգային խորհուրդների և համապատասխան կառավարությունների պայմանագրերում»։ Վիճաբանությունից հետո որոշվում է մի խառը հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ, իսկ մեկ ուրիշը՝ Ղազախ՝ ապահովելու նախապատերազմյան իրավիճակի վերականգնումը։ Հանձնաժողովը պետք է կազմված լիներ 6 հոգուց, որ 1) տեղերում իրականացնի և վերահսկողության ենթարկի կոնֆերանսի որոշումների գործադրումը՝ արյունալի ընդհարումները դադարեցնելու և ստատուս-քվոն վերականգնելու համար, 2) հետազոտի տեղի ունեցած ընդհարումների պատճառները, որի մասին պետք է իրազեկվեր մամուլի միջոցով և տեղեկացվեր Անդրկովկասում գտնվող Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչություններին («Յառաջ» 1920, 17 ապրիլի։ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, թ. 63, 73։ «Борьба» 1920, 21 апреля)։

Թվում է, թե ինչ-որ տեղ սառույցը հալվեց, սակայն դրանից անմիջապես հետո ոչ պատահականորեն Հ. Աղաևը հրապարակում է սադրիչ մի հեռագիր՝ հայերի կողմից Ղազախի շրջանում զինադադարի խախտման մասին, որով Ադրբեջանը իր համար անցանկալի իրավիճակից դուրս էր գալիս։ Հատկանշական է, որ ապրիլի 13-ին Կրիչինսկին հերթական ադրբեջանական «անակընկալն» է մատուցում՝ հայտարարելով վեհաժողովի կողմից իրավական «ստատուսը» վերականգնելու մասին ապրիլի 12-ին ընդունված բանաձևի վերանայման մասին, ընդգծելով, որ օգոստոսի 22-ի ակտից բխող կարգավիճակը հանգում է ընդամենը Ղարաբաղի հայտնի մասերի ենթարկմանը Ադրբեջանի գերակայությանը հայտնի տարածքային սահմաններում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 44–45)։

ՀՀ վարչապետ Ալ.Խատիսյանին ուղղված 1920թ. ապրիլի 14-ի նամակում Հ.Օհանջանյանը այդ կապակցությամբ նշում է, որ ադրբեջանական պատվիրակները, «status qvo ante»-ի վերականգնում ասելով, հասկացել են ընդամենը սահմանների վերականգնման իմաստով, իսկ Ղարաբաղի ներքին կարգավիճակը իրենք հասկանում են Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու իմաստով և ոչ ավելին (Բանբեր Հայաստանի արխիվների 1996, N 1, 80): Տ.Բեկզադյանը փորձեց առարկել, պնդելով, որ անհարկի է արդեն ընդունված բանաձևում փոփոխություններ մտցնել: Գեգեչկորին առաջարկում է չեղարկել այդ հարցը, ընդունված բանաձևը հանձնել մամուլին, իսկ արված հայտարարության առթիվ բանավեճ չծավալել (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.548, թ.175–176): Ադրբեջանի ներկայացուցիչ Օ.Կրիչինսկին կրկին դեմ է արտահայտվում մամուլում բանաձևը տպագրելուն, որին հակառակվում է Ե.Գեգեչկորին, ում առաջարկն էլ անցնում է:

Վեհաժողովի ապրիլի 14-ի նիստում ևս անդրադարձ է կատարվում ապրիլի 12-ի որոշման վերանայմանը: Օ.Կրիչինսկին ընդգծում է, որ ներկայումս իրենք չունեն միջազգային քննարկման այն օբյեկտը, որի դեպքում իրենք իրավասու են պնդելու պահպանել որևիցե պայմանագիր: Տ.Բեկզադյանի իսկ պնդմամբ, զինադադարի խախտմամբ համաձայնությունը կորցրել է իր ուժը, և Օ.Կրիչինսկու առաջարկած ժամանակավոր տարանջատիչ գծերի կարգավիճակի մասին ուղղումը պետք է մերժել: Օ.Կրիչինսկին էլ գտնում էր, որ եթե նախկինում պետական իշխանությունը Ղարաբաղում գտնվել է Հայկական Ազգային խորհրդի ձեռքին, ապա, թեկուզ ժամանակավորապես, Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու պահից, այդ խորհրդի իշխանությունը վերացել է, տարրալուծվելով Ադրբեջանի Հանրապետության գերիշխանության մեջ (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.548, թ.178–179):

Ս.Խաչատրյանը շարունակեց պնդել, թե եթե ադրբեջանական կառավարությունը խախտել է պայմանագրի պայմանները, ապա այն արդեն կորցրել է իր իրավունքները: Փոխարենը Աղանն հակադարձում է, ասելով, որ իրենք չեն ցանկանում, որ վեհաժողովը հաստատի ուժի իրավունքը, որ պատերազմ չի եղել, այլ Ղարաբաղում եղել է խռովություն, և կառավարությունը զինուժի միջոցով կարգ ու կանոն է հաստատել, և առաջարկում է ընդունել իրենց բանաձևը: Գ.Լորդկիպանիձեն փորձելով մեղմել իրավիճակը, գտավ, որ ղարաբաղյան հարցի միջազգային բնույթի մասին որոշակիորեն նշված է եղել օգոստոսի 22-ի համաձայնագրի նախաբանում, և քանի որ այդ ըմբռնումը խախտվել է, ապա անդրկովկասյան կառավարությունները պետք է աշխատեն այն նորից ուժի մեջ դնել, որ Ադրբեջանի կառավարությունը պետք է հարգի նախորդ օրն ընդունված որոշումը («Յառաջ» 1920, 17 ապրիլի, Երևան), որ հայկական բնակչությունը ենթարկվում է Ադրբեջանի կառավարությանը մինչև խաղաղության վեհաժողովի որոշումը, և դրա հետ պետք է հաշվի նստել որպես միջազգային փաստաթղթի (ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.548, թ.180), իսկ Ստ.Մամիկոնյանը պնդում է, որ Ադրբեջանը միայն ժամանակավորապես է տիրել Ղարաբաղին, քանի որ հայկական բնակչությունը, աջակցություն չստանալով ՀՀ-ից, հարկադրված է եղել համաձայնվել միայն ժամանակավորապես ենթարկվելու Ադրբեջանին, իսկ եթե Ադրբեջանի կառավարությունը դժվարանում է համաձայնել այս դրույթի հետ, ապա նա պետք է հաստատի այն հրապարակավ:

Ե. Գեգեչկորին, ոչ պատահաբար շիկացնում է իրավիճակը՝ ասելով, թե կարո՞ղ է արդյոք Ադրբեջանը երաշխավորել Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները, որին ադրբեջանական կողմն ակնթարթորեն պատրաստակամություն է արտահայտում, և Աղաևը ադրբեջանական կառավարության անունից հայտարարում է, որ տեղերը վերադարձող Ղարաբաղի լոյալ հայ բնակչության համար կապահովվի բոլոր ազգային-մշակութային իրավունքները, որոնցից նա օգտվել է մինչև բախումները (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 180): Ի պատասխան՝ Հ. Օհանջանյանը այս կապակցությամբ ընդգծում է, որ դեկլարացիայում «լոյալ» և «ազգային-կուլտուրական իրավունքներ» բառերի հիշատակումը իրենց չի բավարարում, սակայն քիչ ավելի ուշ ՀՀ պատվիրակությունը տեղի է տալիս, համաձայնելով, որ դեկլարացիայում վերապահում արվի, այսինքն՝ ապահովվեն այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնցից հայկական բնակչությունը օգտվել է:

Հ. Աղաևը, էլի օգտվելով հայկական կողմի անողնաշարավորությունից, հայտարարում է, որ Ադրբեջանը Ղարաբաղի հայկական բնակչության համար կպահպանի ազգային-մշակութային իրավունքները, որոնցից նա օգտվել է մինչ այդ (նույն տեղում): Իսկ արդեն ապրիլի 17-ի նիստում Խան-Խոյսկին կրկին հայտարարում է, որ Ղարաբաղը Ադրբեջանի տարածք է, և այստեղ գործը վերաբերում է Ադրբեջանի ներքին իրավակարգին, և որ խոսքը գնում է այն մասին, թե ինչպիսին է Ադրբեջանի կառավարության վերաբերմունքը իր բնակչության հայտնի մասի նկատմամբ, որ այնտեղ մեկնող հանձնաժողովը գուցե և կարողանա ընդարձակել հայ բնակչության արտոնությունները, և դրանով իսկ հարցը փակել (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 5–6): Ե. Գեգեչկորին ևս եզրակացնում է, որ անհրաժեշտ է հայ բնակչությանը վերադարձնել իր բնակության հին տեղերը, որից հետո դնել իրավական դրության հարցը, և դրանով իսկ խաղաղեցնել տարածաշրջանը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 7–9):

Հ. Օհանջանյանը կրկին առաջարկում է հիմք ընդունել ապրիլի 12-ի բանաձևն իրավական ստատուսի վերականգնման մասին, այն հիմք համարելով թե՛ Ղազախի, և թե՛ Ղարաբաղի և այլ շրջանների համար, որի հետ անմիջապես անհամաձայնություն է արտահայտում Խան-Խոյսկին, առարկելով երկու հարցերը իրար միացնելու դեմ, պատճառաբանելով, որ Ղազախում խոսք է գնում օտար տարածքի նվաճման, իսկ Ղարաբաղում՝ հենց բուն պետության ներսում ապստամբության մասին, և որ Ադրբեջանի կառավարությունը ամեն միջոց կգործադրի, որպեսզի հայ բնակչությունն օգտվի ազգային-մշակութային ինքնավարության բոլոր հնարավորություններից (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 8–9):

Հ. Օհանջանյանի Ալ. Խատիսյանին 1920 թ. ապրիլի 18-ի նամակից ակնհայտ է դառնում, որ իրենք ձախողվել են. «Ներկա պայմաններում միանգամայն հնարավոր չէ ավելիին հասնել, և դատելով առկա ռազմական դրության մասին, մենք հարկադրված ենք գնալու ամենամեծ զիջումների» («Բանբեր Հայաստանի արխիվների» 1996, N 1, 82): Ղարաբաղի հանձնախումբն այդպես էլ չի հաջողում արդյունքի հասնել, քանզի ապրիլի 28-ին Խորհրդային Կարմիր Բանակը մտնում է Ադրբեջան («Յառաջ» 1920, 18 ապրիլի):

1920 թ. ապրիլի 20-ի հուսահատ մի դիմումագիր ուղարկվեց Դաշնակիցների ներկայացուցիչներին՝ Դը Մարտելին, Հ. Լյուկին, Մ. Գաբբային. «ի պատասխան Ձեր ապրիլի 27-ի կոլեկտիվ նոտայի... Հայկական կառավարությունը ցույց է տվել Ղարաբաղում ադրբեջանական կանոնավոր ուժերի և բանդաների կենտրոնացման կործանարար հետևանքները՝ նպատակ ունենալով վերջնականապես ենթարկել զենքի միջոցով՝ ի հակառակ օգոստոսի 22-ի համաձայնագրի, որը վերածվեց հայերի մասսայական ջարդի ողջ Ադրբեջանում: Նա այժմ հայտարարում է, որ Ղարաբաղում ամենևին էլ հայկական կանոնավոր զորքեր չկան՝ կանգնելով համաձայնության և բոլոր վիճելի հարցերը խաղաղ լուծելու վրա» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 212): Դաշնակիցների ադրբեջանամետ քաղաքականությունը ՀՀ համար ունեցավ կործանարար հետևանքներ, որի մասին է շեշտում Հ. Տեր-Հակոբյանը դեռ 1919 թ. սեպտեմբերի 16-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հանձնակատարին ուղղված գրությունում. «պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն. թե՛ Տոմսոնի և թե՛ մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարված Անդրկովկասում բրիտանական օկուպացիոն զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի ղեկավար գեներալ Վ. Հ. Բիչի) զեկուցումները, մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել են ի վնաս մեզ» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 62, թ. 45: ֆ. 275, ց. 5, գ. 97, թ. 126):

Ղարաբաղ-Զանգեզուրի և այլ հարցերում անգլիացիների ոչ հայասեր վերաբերմունքի մասին է փաստվում Ալ. Խատիսյանի 1919 թ. սեպտեմբերի 23-ի Խաղաղության կոնֆերանսի նախագահ Ժորժ Կլեմանսոյին ուղղված դիմումագրում. «1919 թ. Բաքվից դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Դ. Շատելվորտը Կոմյունիկե հրապարակեց, որով Ղարաբաղի ժողովրդին հրավիրում էր առանց դիմադրության հպատակվել Խ. Սուլթանովին և ընդունել Ադրբեջանի վարչությունը: Ղարաբաղի ազգային ժողովը անմիջապես մերժեց Դ. Շատելվորտի այս առաջարկը: Այն ժամանակ Ադրբեջանի կառավարությունը կանոնավոր զորքերով և անկանոն քուրդ-թաթար հորդաներով հարձակվեց հայկական գյուղերի վրա: Բրիտանական ուժերի հրամանատարն իր զորքերը դուրս էր բերել Ղարաբաղից: Հայկական միսիան հեռացել էր այնտեղից: Հայաստանի հանրապետական կառավարությունը բուռն բողոքում է ժամանակավոր կարգավորման դեմ, որ բռնի կերպով է հարկադրված Ղարաբաղի ժողովրդին, երկիր, որ միշտ ՀՀ անբաժան մասն է եղել, որի այժմ ճնշող մեծամասնությունը հայ է, 355.000 հայ, միայն 130.000 զանազան ազգություններ» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մաս 1, թ. 3: Ղարիբյան 2012, 240–241):

Մեծ Բրիտանիայի հեռանալուց հետո, հետևաբար, Խորհրդային Ռուսաստանը և վերակենդանացած Թուրքիան դարձան այն երկու պետությունները, որոնք Կովկասյան տարածաշրջանի տերերը դարձան: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև՝ ՀՀ խաբուսիկ հույսը՝ դաշնակիցների օժանդակության հետ կապված, որոնք, ինչպես դիպուկ նկատում են անգլիացի կովկասագետներ

Դ.Մ.Լանգը և Ք.Ի.Ուոքքրը, հայերին և հայ ժողովրդի քաղաքական առաջնորդներին հմտորեն կերակրեցին «Սև ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով» (Լանգ, Ուոքքր 1992, 31): Այդ հույսերը տարան ՀՀ ճակատագրական մեկուսացմանը և անկմանը: ՀՀ-ի նկատմամբ իրավիճակի և դաշնակիցների դիրքորոշման էական փոփոխությունը հեղինակները դիպուկ են նկատել. «1920-ի ընթացքում իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների Հայաստանին տված խոստումները… բուռն վիճաբանություններից հետո… դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած» (Լանգ, Ուոքքր 1992, 32): 1920 թ. ապրիլի վերջերին Ադրբեջանը և հաջորդաբար՝ Ղարաբաղը խորհրդայնացվեց, ինչին արագ հետևեց 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումը (Իոսիֆ Ստալինի ճնշման ներքո), որով հայկական Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին:

Այսպիսով, Հայաստանը, ինչպես մեր օրերում, այնպես էլ պատմական այդ ժամանակահատվածում կրկին խաբված մնաց «դաշնակիցների» կողմից և զրկվեց իր պատմական տարածքներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

ՀԱԱ, ֆ. 45, ց.1, գ. 32:
ՀԱԱ, ֆ.199. ց.1.գ.6:
ՀԱԱ, ֆ.199. ց.1.գ.28:
ՀԱԱ, ֆ.199. ց.1, գ.43:
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.243:
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.271:
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.355, մաս 1:
ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.411:
ՀԱԱ, ֆ.200.ց.1.գ.548:
ՀԱԱ, ֆ.200.ց.1.գ.516:
ՀԱԱ, ֆ.200.ց.1.գ.563:
ՀԱԱ, ֆ.200.ց.1.գ.576:
ՀԱԱ, ֆ.275, ց.5.գ.97:
ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.321:

Պարբերական մամուլ

«ՅԱՌԱՋ» 1920 – «Յառաջ» թերթ, Երևան, 1920, մարտի 7:
«ՅԱՌԱՋ» 1920 – «Յառաջ» թերթ, Երևան, 1920, մարտի 11:
«ՅԱՌԱՋ» 1920 – «Յառաջ» թերթ, Երևան, 1920, ապրիլի 17:
«ՅԱՌԱՋ» 1920 – Յառաջ» թերթ, Երևան, 1920, ապրիլի 23:
«ՅԱՌԱՋ» 1920 – Յառաջ» թերթ, Երևան, 1920, ապրիլի 27:
«АЗЕРБАЙДЖАН» 1920 – «Азербайджан», Баку, 1920, 7 марта.
«АЗЕРБАЙДЖАН» 1919 – «Азербайджан», Баку, 1919, 24 августа.

«БОРЬБА» 1920 – «Борьба», Тифлис,1920, 22 апреля.

Գրականություն

ԼԱՆԳ, ՈՒՈՔԸՐ 1992 – Լանգ Դ.Մ. Ուոքքր Ք.Ջ., Հայերը: (Հայ ժողովրդի պատմություն), Երևան, 1992:

ԽԱՏԻՍԵԱՆ 1968 – Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968:

«Բանբեր Հայաստանի արխիվների» 1996 – Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին, 6 ապրիլի-22 ապրիլի 1920 թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, N 1, էջ 71 – 88:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1996 – Հարությունյան Հ.Մ., Լեռնային Ղարաբաղը 1918 – 1921 թթ., Երևան, 1996:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2005 – Հովհաննիսյան Ռ.Գ, Հայաստանի Հանրապետություն, Հատոր 1, Առաջին Տարի, 1918 – 1919, Երևան, 2005:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ.Գ. 2015 – Հովհաննիսյան Ռ.Գ, Հայաստանի Հանրապետություն, Հատոր 3, Լոնդոնից-Սևր. փետրվար-օգոստոս 1920, Երևան, 2015:

ՂԱՐԻԲՅԱՆ 2012 – Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918 – 1920 թվականներին և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012:

ՎԻՐԱԲՅԱՆ 2004 – Վիրաբյան Վ.Հ., Հայաստանը Անդրկովկասյան Հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Երևան, 2004:

ՎՐԱՑԵԱՆ 1928 – Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928:

ՎՐԱՑՅԱՆ 1993 – Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

ВЕКИЛОВ 1998 – Векилов Р.А., История возникновения Азербайджанской Республики. Баку, 1998.

ПИЛИПЧУК 2021 – Пилипчук Яр.В., Азербайджанское государство в контексте русско-турецких отношений. //South Caucasia In The Context Of Social, Economic And Political Progress In The Post-Cold War Era, Editors Assoc. Prof. Dr. Vefa Kurban, Assoc. Prof. Dr. Muvaffak Duranli, Ankara, 2021, p. 105 – 187.

ТУМАНЯН 2012 – Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918 – 1920 гг., Ереван, 2012.

VIRABYAN 2021 – Virabyan V.H., Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), «Fundamental Amenology (Electronical Journal)», N 1, p. 51 – 81.

Vanik Virabyan
Doctor of Sciences in History, Professor

Armenian State Pedagogical University After Khachatur Abovyan
vanik.virabyan@mail.ru

MOUNTAINOUS KARABAGH ISSUE IN TIFLIS CONFERENCE IN APRIL OF 1920 AND THE POSITION OF MILITARY-POLITICAL REPRESENTATIONS OF EUROPE STATES IN THE TRANSCAUCASUS

Keywords: RA, Mountainous Karabagh, Tiflis, Azerbaijan, Russia, Great Britain, Baku.

In 1918 – 20s the steps of military politics of Azerbaijani were directed towards the frustration of Armenian State system. With this intention, Andranik's and Dro's forces were taken out, with the help of British generals W. Thomson and D. Shatelworth. This allowed Azerbaijani families on the 22nd of August in 1919 make the Armenian council in Kara-

bagh temporarily obey Azerbaijani Government till the solution of this disputable issue by the French conference of allied union, which was one of the beforehand planned cunning steps of Azerbaijani government.

In reality, as a result of later important military changes in the Republic of Armenia and as a result of mutually beneficial agreement between Soviet Russia and Kemal Turkey as well as taking into consideration the evident connivance of allied powers Azerbaijani managed to capture not only Nachijevan, but Karabagh and other Armenian lands.

Ваник Вирабян
Доктор исторических наук, Профессор

Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна
vanik.virabyan@mail.ru

ВОПРОС НАГОРНОГО КАРАБАХА НА АПРЕЛЬСКОЙ ТИФЛИССКОЙ КОНФЕРЕНЦИИ 1920 Г. И ПОЗИЦИЯ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ПРЕДСТАВИТЕЛЬСТВ ЕВРОПЕЙСКИХ ДЕРЖАВ В ЗАКАВКАЗЬЕ

Ключевые слова: РА, Нагорный Карабах, Тифлис, Азербайджан, Россия, Великобритания, Баку.

В 1918–1920 гг. военно-политическая стратегия Азербайджана была направлена на подрыв армянской государственности, для чего и все силы были направлены на отторжение исконно армянских территорий от Республики Армения. С этой целью и с помощью британских генералов У. Томсона и Д. Шателворта из Карабаха были отодвинуты сили Дро и Андраника, что позволило азербайджанским властям, так называемым обманчивым “согласительным” актом от 22 августа 1919 г., принудить армянского совета Карабаха временно подчиниться власти Азербайджана до справедливого разрешения спорного вопроса Парижской конференцией союзников, что в конечном счете было обдуманным хитрым маневром со стороны азербайджанского правительства.

В конечном итоге, в силу происшедших в дальнейшем важных изменений в военно-политической ситуации в регионе вокруг Республики Армения, взаимовыгодного согласия между большевистской Россией и кемалистской Турцией, но также и явного попустительства союзных держав, Азербайджану удалось захватить не только Нахичевань, а также Нагорный Карабах и другие армянские земли.